

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

(Սույն ուղեցույցը մշակվել է հիմք ընդունելով ինչպես ՈԱԱԿ-ի կողմից կազմված համապատասխան ուղեցույցը, այնպես էլ ներքին շահակիցների հետ քննարկումներն ու նրանց կողմից ներկայացված առաջարկությունները)

ԳՅՈՒՄՐԻ 2020

1. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԹՅՈՒՆ

Ինչպե՞ս կազմակերպել դասավանդումն ու ուսումնառությունն առցանց ուսուցման պայմաններում՝ խուսափելով կրթության որակի վրա բացասական ազդեցությունից:

1. Առցանց ուսուցում իրականացնելիս ցանկալի է առաջնորդվել հետևյալ մոտեցումներով.

- **Ներդնել խորհրդատվական աջակցության հարթակ:** Հարկ է, որ ուսանողներն ու դասախոսները կարողանան խորհրդատվություն ստանալ տեխնիկական, ծրագրային ապահովման խնդիրների վերաբերյալ: Խորհրդատվությունը կարելի է իրականացնել ինչպես հեռախոսագրույցի, այնպես էլ առցանց նամակագրության ու առցանց ուղիղ միացման միջոցով: Այստեղ կարող են ներգրավվել ինչպես SS ոլորտի մասնագետները, այնպես էլ կամավոր ուսանողները:

- **Ներդնել տեխնիկական աջակցության հարթակ:** Էական է, որ բոլոր ուսանողներն ունենան համապատասխան սարքավորումներ և հեռահաղորդակցության հնարավորություններ, որոնք անհրաժեշտ են առցանց ուսուցման և ընթացիկ ու ամփոփիչ գնահատման գործընթացներում լիարժեք ներգրավվելու համար: Համընդհանուր ինքնամեկուսացման նախազգուշական միջոցառումների պայմաններում ուսանողներն իրենց բնակարաններում կարող են սահմանափակ տարածք ունենալ առցանց աշխատելու համար: Որակի ապահովման չափանիշները ենթադրում են, որ բուհերը պետք է ունենան բավարար ռեսուրսներ և ուսանողների աջակցության ծառայություններ՝ ապահովելու բարձրորակ կրթություն: Կարելի է ներդնել ուսանողներին և դասախոսներին տեխնիկական սարքերով աջակցության մեխանիզմ: Այս խնդրի լուծման հետ

կապված կարելի է ներգրավել բարերարների և կիրառել բուհի միջոցները ժամանակավոր տրամադրելու մոտեցումը: Հնարավորության դեպքում հարկավոր է աջակցել համապատասխան սարքավորումներով կամ հատկացնել տեխնիկայով ապահովված համապատասխան տարածք համալսարանում:

•Ապահովել հեռավար ուսուցման տարբեր հարթակներից օգտվելու հասանելիություն:

- Դասախոսների համար հասանելի դարձնել ՆՈՐԿԵՆՏ ծրագրով հեռաուսուցման դասընթացի ուսումնական նյութերը: Հասանելի դարձնել նաև առկա բազմաթիվ ուղեցույցներն ու տեսանյութերը, որոնք ներկայացնում են, թե ինչպես կարելի է ուսուցումն իրականացնել առցանց տարբեր ծրագրերի միջոցով, և ծանոթացնում տարբեր ծրագրային միջոցների հնարավորություններին (օրինակ՝ <https://bit.ly/2UT1kHp>, <https://bit.ly/3aAlnRG>, <https://bit.ly/39suhzi>, <https://handbook.amedu.am/?p=learning>, https://www.youtube.com/watch?v=o1u1k7YMnQE&feature=youtu.be&fbclid=IwAROCM1lBQIF_wMIQOOIF1aF_TRaPzTnOh2FIchmFkxh0sjVJaVEzyp9LJkM, <https://www.facebook.com/watch/?v=767668560431854>, <https://www.youtube.com/watch?v=3an4iodqEQI>, <https://www.youtube.com/watch?v=tZkpDkldzNk>, <https://www.youtube.com/watch?v=49a1qV5hfR8>):

- Աստիճանաբար կիրառության մեջ դնել Moodle համակարգը, որը ներդրվել է ՆՈՐԿԵՆՏ ծրագրով: Պատրաստել տեսանյութ և տեղադրել խորհրդատվական աջակցության հարթակ, որից օգտվելով՝ դասախոսները կարող են պատրաստել համապատասխան ձևաչափի դասընթաց՝ Moodle հարթակում տեղադրելու համար: Միաժամանակ վերապատրաստումներ և փորձի փոխանակման միջոցառումներ

կազմակերպել և անցկացնել այս ուղղությամբ:

- Ձեռք բերել Zoom ծրագրի պրոֆեսիոնալ տարբերակ: Դասախոսներին հնարավորություն տալ այդ տարբերակից օգտվելու: Այս պարագայում վերահսկողական գործընթացները կլինեն լիարժեք և արդյունավետ:

- Առցանց դասավանդումը ուսանողներին պարզապես դասախոսությունների փաթեթի և գրականության տրամադրումը չէ: Այս պարագայում ևս դասավանդումը պետք է պլանավորված և կառուցված լինի նույն պատասխանատվությամբ ու մանրամասնությամբ, ինչպես լսարանային դասավանդման ժամանակ: Կարևոր է, որ դասավանդման նոր եղանակը հնարավորինս պահպանի նաև լսարանային ուսուցման առավելությունները:

- Առցանց դասավանդումը գուցե նույնչափ հարմար չլինի բոլոր դասընթացների համար: Անհրաժեշտ է, որ դասախոսական կազմը դասավանդումը հարմարեցնի առցանց ձևին՝ օգտագործելով լրացուցիչ մատչելի մեթոդներ և ռեսուրսներ: Հնարավոր է նաև, որ որոշ դասախոսներ աջակցության կարիք ունենան այս հարցում:

- **Զարգացնել ու համալրել էլեկտոնային գրադարանը:** Այս նպատակի համար շատ կարևոր է գրքերի թվայնացման սարքի առկայությունը: Իսկ մինչ այդ հարկավոր է այնպիսի միջոց կիրառել, ինչը թույլ կտա ուսանողներին օգտվելու համապատասխան գրականությունից, քանի որ ուսումնական գործընթացը շարունակվում է, իսկ գրքերը այդ գործընթացի անբաժան մասն են: Կարելի է կիրառել առցանց պատվերի համակարգը: Պատվերն ստանալով՝ համապատասխան աշխատակիցը կարող է համացանցում որոնել գրքի էլեկտրոնային տարբերակը և գտնելու պարագայում 3-5-օրյա ժամկետում ուղարկել պատվիրատուին. էլեկտրոնային տարբերակի

բացակայության և թղթային տարբերակի առկայության դեպքում կարող են հրավիրել պատվիրատուին այն ձեռք բերելու համար՝ նշելով որոշակի օր և ժամ:

• **Ապահովել ստորաբաժանումների (ամբիոնների, ֆակուլտետների, կենտրոնների, բաժինների) հասանելիությունը:** Կոնտակտային տվյալները (էլ. փոստի հասցե, հեռախոսահամար) հասանելի դարձնել շահակիցներին բուհի պաշտոնական կայքէջի և այլ միջոցներով, որպեսզի մասնավորապես ուսանողները կարողանան համապատասխան հարցերով դիմել. վերջինս կապահովի այսպես ասած վիրտուալ այցելություն: Կարելի է կառուցվածքին համապատասխան հարթակ ստեղծել այնպես, որ շահառուն, սեղմելով կառուցվածքային ստորաբաժանման անվան վրա, տեսնի կոնտակտային տվյալները:

• **Ապահովել հեռավար ուսումնառության կազմակերպվածությունն ու վերահսկելիությունը:**

- Անհրաժեշտ է հստակեցնել ուսանողներից ակնկալվող արդյունքները ուսումնառության նոր պայմանների դեպքում, ներդնել համապատասխան մոտեցումներ՝ կրթական ծրագրի ուսումնառության նախատեսված վերջնարդյունքներն ապահովելու համար:

- Ուսումնառությունը կազմակերպել ըստ կազմված դասացուցակների: Առանձին դեպքերում դրանց չհետևելու պարագայում տեղեկացնել դեկանին:

- Հեռավար/առցանց դասընթացներ անցկացնելիս մուտքի հնարավորություն տրամադրել ամբիոնի վարիչին և դեկանին, որպեսզի հնարավոր լինի նրանց կողմից վերահսկողության իրականացումը:

- Դասընթացներին ուսանողների ներգրավվածությանը խոչընդոտող խնդիրների վերաբերյալ տեղեկացնել դեկանատներ՝ անհրաժեշտ լուծումներ իրականացնելու համար:

2. ԿՐԵԴԻՏ, ԱՌԱՋՆԹԱՑ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏ

2. Կարելի է քննարկել ճկուն մոտեցում ցուցաբերելու հարցը հետևյալ նկատառումով. դասընթացին տրվող կրեդիտների ներքին համամասնությունը կարելի է փոխել՝ ավելի շատ ժամանակ տրամադրելով ուսանողի ինքնուրույն աշխատանքին, ընթացիկ գնահատմանը և աջակցող խորհրդատվություններին:

3. Դասախոսները պետք է վերախմաստավորեն ուսումնառության վերջնարդյունքները յուրաքանչյուր դասընթացի համար: Դրանք պետք վերապլանավորվեն այնպես, որ առցանց ուսուցման պայմաններում ուսանողներն իրատեսական հնարավորություն ունենան հասնելու ակնկալվող վերջնարդյունքներին և կուտակելու համապատասխան կրեդիտները:

4. Առցանց ուսուցմամբ առաջացած խոչընդոտների լուծման համար հարկավոր է քննարկել ուսանողների հետ առցանց եղանակով:

5. Իրականացնել ուսանողների և դասախոսների ծանրաբեռնվածության գնահատում՝ հետագայում լրացուցիչ դասընթացներով լրացնելու դասավանդման, ուսումնառության և գնահատման հնարավոր բացերը:

6. Որոշ դասընթացներ պահանջում են սահմանված քանակությամբ գործնական ժամեր կամ գնահատման հատուկ մեխանիզմներ: Այդ պատճառով հարկ է վերապլանավորել ծրագիրն այնպես, որ իրավիճակի կայունացումից հետո ուսանողները հնարավորություն ունենան ձեռք բերելու

սահմանված պրակտիկ հմտությունները հարակից առարկաների կամ ուսումնական այլ գործունեության միջոցով (ավարտական կուրսերի համար հատուկ մոտեցման կարիք ունեն միայն ավարտական քննությունները):

3. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Գնահատման համակարգում ցանկացած փոփոխություն անդրադառնում է որակի ապահովման բազմաթիվ ոլորտների վրա՝ գնահատման համակարգի կառուցվածքին, կանոնակարգերին, բողոքարկմանը, քաղաքականությանը: Գնահատման համակարգում փոփոխություններից բխող վերափոխումները մի շարք ոլորտներում ակնհայտ են: Բայց հարկավոր է հաշվի առնել հետևյալը.

7. Անհրաժեշտ է ապահովել քաղաքականության, ընթացակարգերի և կանոնակարգերի ճկուն կիրառում՝ հաշվի առնելով չնախատեսված կամ մեղմացնող հանգամանքները:

8. Երբ դասախոսները գնահատման այլընտրանքային մեթոդներ կիրառեն, հարկ է հաշվի առնել, որ ուսանողները պետք է հասնեն ծրագրով սահմանված վերջնարդյունքներին: Իսկ եթե վերջնարդյունքների ապահովման հետ կապված առկա են խնդիրներ, ապա դրանք պետք է քննարկվեն ամբիոններում, որպեսզի հետագայում ապահովվի բացերի լրացումը:

9. Խմբի մեծության պարագայում կարելի է կիրառել այլընտրանքային մեթոդներ՝ ապահովելով դասընթացի/մոդուլի ուսումնասիրության արդյունքներին համապատասխանությունը, ինչպես նաև կարելի է փոքր խմբերի բաժանել:

10. Հարկավոր է մեծ տեղ հատկացնել հանձնարարականներին և հետադարձ

կապ ապահովել՝ անդրադառնալով բացերին ու հնարավորություն տալով ուսանողներին լրացնելու դրանք:

11. Կարելի է հանել ամփոփիչ ստուգումները և թույլ տալ դասախոսին գնահատական նշանակել ընթացիկ հանձնարարականների կատարման արդյունքների հիման վրա:

12. Նախնական պաշտպանության գործընթացը դիտարկել նաև որպես ամփոփիչ ատեստավորման գործընթացի փորձնական փուլ, որի արդյունքներով վեր հանել խնդիրները ամփոփիչ ատեստավորման գործընթացը անխափան և լիարժեք կազմակերպելու համար:

13. Ամփոփիչ ատեստավորման ժամանակ կարելի է համապատասխան սարքավորումներով առանձնացված լսարանից ուսանողների հեռավար միացման հնարավորություն ընձեռել այն դեպքերի համար, երբ ուսանողը չի ունենա հնարավորություն տանից պատշաճ կերպով ներկայանալու: Իհարկե, հարկ կլինի ապահովել ախտահանում և պահանջվող այլ միջոցառումներ:

12. Քանի որ իրավիճակն աննախադեպ է, ուստի հարկավոր է պատրաստ լինել սովորականից շատ բողոքարկումներ ընդունելու: Բողոքներն ընդունող և քննող մասնագետները պետք է պատրաստ լինեն ծագած ցանկացած խնդրի վերաբերյալ արդար և հետևողական որոշում կայացնելուն: